աշակերտներուն, զգուշացնելով զանոնք կեանքի սայթաքումներէն, որ ըլլան ընտիր զաւակներ իրենց ընտանեաց և ազգին՝ հաւատարիմ այն բարձր սկզբունքներուն և կրթութեան զոր իրենց աւանդեց Վարժարանը, զոր կը պահանջեն անոնցմէ Աստուած և մարդկային ընկերութիւնը. յիշեցնելով կրկին անգամ անոնց պարտականութիւնները, կոչ ըրաւ նաեւ ծնողներուն որ լաւ հսկեն իրենց զաւակներուն վրայ, ու բարի արձակուրդ մաղթելով ամենուն՝ կնքեց իր խօսքը:

Հանդէսը վերջացաւ աշակերտական երգչախումբի երգած քանի մը գեղեցիկ կտորներով՝ Հ. Վահան Յովհաննէսեանի գրած և Գ. Մ. Ալէմշահի ձայնագրած «Հայկական ցեղ»ը, Վ. Տէնտի «Լարոթիքէր Ֆասէսիէօ» Ֆրանսերէն լեզուով, Դալիաբիէդրայի «Ծննդեան գիշեր»ը Իտալերէն լեզուով և Ֆոսդերի «Օլտ պլէք ճօ»ն Անգլիերէն լեզուով:

Ամէն ինչ աւարտեր էր. տարեկան առատ և յաջող հունձք մ'ալ փառաւորութիւնը կ'ըլլար մեր ազգանուէր հաստատութեան, և երջանկութիւնը այնքան ծնողներուն որոնք ուրախութեան արցունքով կը գբկէին իրենց զաւակները, վստահ թէ անոնք այլեւս կազմուած էին՝ բարի, կիրթ, ազգասէր և գիտուն նկարագրով, և ուրիշ բան չէր մնար՝ եթէ ոչ նեռուիլ կեանքի ասպարէզին մէջ և շինել իրենց գիրքն և բախտը որուն արդէն երաշխաւորութիւնն ունէին:

Ա. Խոջամիրեան
Աշակերտ Մուրատեան վարժարանի

ՀԱՅ ԳՐԻ ՄՇԱԿՆԵՐ

Մխիթարեան Ուխտիս հայկական մատենադարանին ղրկեցէք ձեր բոլոր հրատարակութիւններէն գիրք, թերթ, օրագիր եւն. գրախօսելու կամ համարժէք գրքեր ստանալու պայմանով:

Մի՛ մոռնաք որ այդ կերպով սատարած պիտի ըլլաք միանգամայն ողբ. Հ. Ա. Ղազիկեանի կիսատ թողած հսկայ «Հայկ. մատենագիտութեան» ամբողջական հրատարակութեան ատաղձ հայթայթելով եւ աշխատողները քաջալերելով: ԽՄԲ.

ՕՐՈՒԱՆ ԳՐՔԵՐ

ՅՈՒՅԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ — Արտաւազդ Արքեպ. Սիւրմէեան. Հալէպ. տպ. Յերուսաղէմ, 1935. էջ 415, գին՝ 100 Ֆ. Ֆր.:

Հալէպի առաջնորդը կը գործէ, ցոյց տալով իւր յաջողակութիւնն յերկոցունց ձեռաց: Չի բաւականանար իւր հօտին հոգեւոր հովուութեամբ միայն, այլ կը զննէ, կը ժողովէ, կը յաւերժացնէ նա և ինչ որ կայ վիճակին մէջ հայրենի յիշատակներ, կամ նշխարներ մեր անցեալէն: Ազգ մը միայն ներկայով չի ապրիր, այլ կը պահանջէ իւր անցեալն և ապագայն ալ: Հետեւաբար առաջնորդաց պարտականութիւնն է զբաղիլ նաեւ անոնցմով: Մատենագրական և ազգագրական որչափ գանձեր կորսուեցան անդարձաբար մեր վերջին քաղաքական պատահարաց ժամանակ: Եթէ առաջնորդը փոյթ ունեցած լինէին՝ իւրաքանչիւրն իւր գտնուած վայրին մէջ ապահովելու անոնց գոյութիւնը, հաւաքելով ի միասին, լուսանկարելով, և ամփոփելով գրքերու մէջ, այժմ չէինք աւաղեր այդ կորուստները: Արտաւազդ Սրբազան կ'ուզէ ցուցնել՝ թէ կամք չունի իւրմով աւելցնելու անտարբեր առաջնորդաց թիւը: Մենք ջերմապէս կը շնորհաւորենք զինքը: Ի լոյս ընծայեց այս կարգի աշխատութիւններէն՝ Պատմութիւն Հալէպի ազգային գերեզմանատանց. — Նկարագիր Օշին թագաւորի ձեռագիր ժամագրքին. — և այժմ՝ տեղւոյն ձեռագրաց ցուցակը, զոր Ազգը պէտք է ընդունի շնորհակալութեամբ:

Պատկառելի հատոր մ'է այս վերջին աշխատութիւնը, թէ՛ բովանդակութեամբ և թէ պատրաստութեամբ: Ո՞վ գիտէր մեր ազգայիններէն՝ որ այդ հեռաւոր Սիւրիոյ մէկ անկեան մէջ կը հանդչին 157 կտոր հայ ձեռագրեր՝ Ս. Քառասնից եկեղեցւոյն մէջ, և 34 եւս քաղաքին ազգայնոց քով: Սիւրմէեան Սրբազան ցուցակագրելով զանոնք, կը ծանօթացնէ ազգիս, և միանգամայն կ'ապահովէ և կը մշանջենաւորէ անոնց յիշատակն հայ մատենագրութեան պատմութեան համար:

Ցուցակագրութեան արդի արուեստը կատարեալ է անոր մէջ՝ իւր բոլոր մանրամասնութիւններովը: Ներածութիւն մը գրքին սկիզբը. յետոյ ընդհանուր տախտակ մը գրչագրաց, և ապա անոնց նկարագրութիւնը մի ըստ միոջէ: Այդ գրչագիրք ընդօրինակուեր են զանազան վայրերու մէջ, մէկ մասն ալ նոյն ինքն Հալէպի, որ մեծ աշխատութիւն նուիրուեր է երեմն գրչութեան արուեստին, սկսեալ ԺԴ դարէն, ինչպէս կը դիտէ հեղինակը: Բովանդակութեամբ՝ ընդհանրապէս աւետարան և եկեղեցական պաշտամանց յատուկ գրքեր են. և ոմանք բաւական կարեւոր իրենց հնութեամբ: Այսպէս կան Աւետարաններ՝ 1230, 1231, 1259, 1275, 1284, 1298, 1300, 1309, 1327, 1338 և 1358 թուականներէն. Մանրուսմունք՝ 1275 և 1336 տարիներէն, Գանձարան մը 1354էն. Պօղոսի թղթոց մեկնութիւն մը 1307էն. Ժողովածոյ մը զանազան բաներից՝ 1292էն. և այլն:

Գրչագրաց պատմականութեան տեսակէտով՝ մեծ է անշուշտ կարեւորութիւնն Օշնի ժամագրքին, զոր յիշեցինք, գրուած 1319ին, և որոյ համար ալ անոր առանձին ու մանրամասն նկարագրութիւնն հրատարակեց Սրբազանը: Կը բովանդակէ ժամագիրք, Սաղմոս, Շարական ու Տօնացոյց, առաջին երեքն ինչ ինչ մասանց մէջ նոր համեմատած է տպագիր ընթացիկ օրինակաց հետ, և տարբերութիւնքը խնամով նշանակած, և ատով գրեթէ գրչագիր բնագիրն իսկ տուած է սոսուամասիրաց ձեռքը: Ժամագիրքը կը գտնուի նոյն դարու յատուկ յօրինածութեան մէջ, և Հանրագիտեան ժամերգութիւնը դեռ նախնական ձեւն ունի: Իսկ Առաւօտեան ժամերգութեան կիւրակէի կարգն առանձին գրուած է յետ Աբեւագալին: Շարականաց մէջ խառնուած են և պարականոնք, զորս մասամբ կ'ընդօրինակէ հրատարակիչը. նոյնպէս ժամերգութեան ինչ ինչ երգեր՝ որոնք այսօր սովորութենէ դուրս կը մնան: Տօնացոյցը տակաւին իւր նախնական կազմին մէջ է, և շատ համառօտ: Միով բանիւ՝ եկեղեցական գրոց ուսումնասիրութեան համար օգտակար աղբիւրներէն մին է հրատարակութիւնս:

Պատմականօրէն կարեւոր է Կոռիկոսի տիրոջ Հեթմոյ ժամանակագրութիւնն ալ, որ այս գրչագրիս մէջ ընդարձակուած է քան սովորական և արդէն տպագրուած օրինակը: Ընդարձակիչն է Բ Լեւոնի ու Կիրակոսի զաւակաց մին, գուցէ Օշին ինքնին, որ ըստ կարգի ժամանակին կը յիշէ նա և իւր և հարազատից (15 հոգի) ծնընդեան թուականները, հանդերձ մահուամբ իրենց մօր. «փոխեցաւ ի Քրիստոս ամենայն հոգւով և գեղեցիկն տեսով՝ նագովելին հոգւով և գեղեցիկն տեսով՝ առաքինի մայրն իմ Կիրան թագուհին Հայոց»:

Հ. Վարդան Հայոնի

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԵԳԻՐՔ — Ա. Տարի, Տպ. Սահակ-Մեսրոպ, Գահիրէ, 1936.

Զանազան մասերու բաժնուած է Տարեգիրքը: Ա. Գրականութիւն, ուր Հրաչ Բեգիրքը: Ա. Գրականութիւն, ուր Հրաչ Զարդարեան «Այն դէպքերեն վերջ» նորավէպին մէջ կը նկարագրէ Իզմիրի դէպքէն ազատուած Սեղրակին ողիսականը:

Տարագրութենէն, գնդակահար ըլլալէն ազատած հայ խլեակներուն թշուառ վիճակը նկարագրուած է այդ նորավէպին մէջ:

Գէորգ Կառվարենց ունի «Խաչբուռ» քերթուածը ուր կ'ողբերգէ.

«Ներէ՛ ինձ, Մայր, որ սիրոյս հունձքը մատղաշ,
(Որ գորովիդ ծըլարձակումն է վսեմ),
Հողվարիդ վրայ իբրեւ խաչբուռ ես հիւսեմ,
Եւ զայն օրհնէ՛ ձեռքերովդ այն սրբատաշ...»:

Հրաչ Քաջարենց «Խօսք ընդ Ցիսուսի» աղօթքներուն մէջ մայր հայրենիքին կարմիր ողբը կը գոռայ. Ներել կ'ուզէ սորվիլ,

digitised by A.R.A.R.@

բայց չի սորվիր, զի անզէն ու անտէր նահատակ ազգին «Հոգւոյն ամբարտակներուն վրայէն վրէժի Նիակարան կը թաւալի»։

Քաջարենց, սակայն, ունի երկրորդ հայրենիք մ'ալ, Իտալիան, որուն գեղեցկութիւնները իրեն ներշնչարանն եղած են, ու ինք, առանց զինաթափ ըլլալու իր պատնէշին վրայ կանգուն մնալով է որ կ'երգէ։

Եդուարդ Տարօնեան ս. Լուսաւորչի Քրիստոնէութիւնը հայ հեթանոսութեան հետ կը ներդաշնակէ, ուր կախարդական հեթանոսութիւնը Արտաշատի մկրտարանին մէջ չի կորսնցներ իր լուսաբուխ հայ շնորհքէն։

Մ. Իշխան «Դուք, Մամիկներ Սեւազգեստ» քերթուածով կ'երգէ զիւցազնական հայ մայրերու տոհմային դարաւոր մաքուր բարքերը. անոնց կ'ուղղէ այս տողերը.

«Մայրեր. փարթամ օճախի, հարս ու թոռան [անհաշիւ,
Հիմա մինակ, կիսաքաղց, խուցերու մէջ ցրտա- [հար,
Միշտ փառք տալով Աստուծոյ՝ դուք կը մանէք [ցայգ ու տիւ
Սեւ օրերու վաստակին նոյն բարակ թելն ան- [սպառ...»։

Լուիզա Ասլանեան (Լաս) «Դեւը» նորավէպով կը պայքարի վայրագ հայեացքով հրէշ Ստուերի մը հետ. Լերմոնտովի քնարերգութիւնը չկայ իր այդ վիպակին մէջ, այլ Տոստոյեւսքիի ըմբոստութիւնը, և Կէօթէի Մէֆիսթոֆէլի նենգամիտ հեգնանքը. միամիտ աղջկան երեսին կը պոռայ Դեւը, թէ չկայ ոչ Կամք, ոչ Ազատութիւն. «Դրանք բոլորը վերից են շղթայուած, վերից»։

Արմեն Անոյշ կ'երգէ «Արմենիա»ն... ու մեծ հաւատքով կ'ըսէ անոր թէ նորահաս սերունդները զինուած են հայրենիքի գաղափարականով.

«Պիտի քալեն հաստատակամ ու խրոխտ.
Ճամբաները ձիւնի նման պիտի հալին իրենց [առջեւ,
Ու թումբերը պիտ' քանդուին...»։

Մեհեան Կ. — Իր «Արդարութիւնը» հէքեաթին մէկ կը տրամաբանէ նոր օրէնքներու ապօրինութեամբ, ինչ որ դատապարտելի է, իմաստունին բերնով Մեհեան ինքն ալ զայդ կը դատապարտէ։

Վահրամ Սօֆեան կ'երգէ

«Փառք քեզ, ով Տէր ամենակալ
Որ հողեղէն մարմնին այս մունջ՝
Շնորհեցիր աստուածարեալ
Քու տեսքէդ տեսք և շունչէդ շունչ»։

Սօս–Վանի ունի «Երգն Հայաստանի» աւանդավէպ մը, ուր դրած է Հայրենիքէն շնչող աղօթքի, խունկի, մագաղաթի բոյրերը։ Արարատ ու իր անտառը գրաւիչ են. ան կը խօսեցնէ վարպետը որ աշակերտին կը պատմէ թէ. «գեղեցկութիւնն ու զարհուրանքը միասին կ'ապրին Հայաստանի մէջ։ Վերելքն ու անկումը զուգահեռ կը քալեն։ Հայաստանը՝ լոյսի և ողբերգութեան վրայ իր կամուրջը կը ձգէ քմայքոտ ճարտարագէտի մը պէս։ Եւ այս հակադրութիւնը բացատրող չկայ...»։ Սօս–Վանի «Երգն Հայաստանի» անբացատրելի մնացած է կ'ըսէ։ Հայաշխարհի բեմին մէջտեղը խրոխտապանծ բազմող անվերծանելի կոթող Արարատը՝ ձիւնին տակ ծածկուած, անտեսանելի կը դառնայ. «Իրը յուշ ու ապրում, անոր կը մնայ միայն Պատկառանքին վեհութիւնը...»։ Զէ, Սօս–Վանի, այլեւս ուժին փառաբանութիւնն ընող դարը՝ պատկառանք չունի ծերութեան վեհութեան վրայ։

Արսէն Երկար կեանքին պարտէզը մտնելուն, Յոյսին փեթակը ծեփուած կը գտնէ հողով ու յարդով. ու ցաւագին կ'երգէ.

«Դեռ կը սպասեմ. թեւերս խո՞նջ են սրտիս [վրայ...
Ի՞նչ գարուններ անցան լուսե՞զ ու անձկագին.
Ու չի կայ ձեռք մը բացող դուռը փեթակին...»։

Արամ–Դաւոնի կը վիպերգէ «Թիթեռնիկի մը նման լեգենդը»։

Անտոն Կագէ. — «Իմաստութեան գիրքէն» կը խօսի։

Հ. Ժամկոչեան. — «Անսէր և անհաւատ մը նամակը» նիւթ կ'ընէ նորավէպի։

Համատեղ. — «Տոմար Մաքիական» քերթուածին մէջ կ'ուրուագրէ գաւառի մէկ տիպերէն՝ Ուստա Մակարը որ «Էս աշխարհին չարը տեսաւ քան թէ բարին»։

Եւ ատով տարեգիրքը իր գրական բաժինը կը փակէ։

Բ. մասը կը պարունակէ քննադատութիւններ և ուսումնասիրութիւններ։

Յ. Օշական ուսումնասիրելով Զրաքեանի «Ներաշխարհ»ը, հին դէմքերու գլխէն վար կ'առնէ դափնեպսակը. չեն խնայուած և ոչ իսկ Ալիշանը և Աբովեանը. կ'երթայ առաջ Շահագիզի «Լեւոնի վիշտ»ն ալ կը վշտացնէ, զի «տաժանք մըն է անոր ընթերցումը»։ Ժամանակագրական պայմաններուն և ըմբռնումներուն համաձայն պէտք է չափուին անցեալի մեծ ու փոքր դէմքերը, մեր նոր քննադատները պէտք չէ մոռնան թէ կայ հին առակի մը անժխտելի ճշմարտութիւնը — «Այսօր ինծի, վաղը քեզի»։ Օշական կը հարցնէ. «Ձեմ գիտեր, յամին շնորհաց 1935ին, այսինքն Ներաշխարհէն երեսուն տարի վերջ, նման գրքի մը ուրիշ ընդունելութիւն պիտի յարդարէի՞ն մեր լրագիրները, իրենց գրական ուսումնասիրութիւններով կամ քրոնիկներով»։ Մինչդեռ 1912ին նոյն յարգելի քննադատը «Շանթ»ի մէջ Զրաքեանը կը խարազանէր՝ անոր գրականութեան մէջ գտնելով «անիմաստ, ապարդիւն, պոմէջ գտնելով «անիմաստ, ապարդիւն, պոռոտ ու յիմարական ըսուելու չափ խայտարղէտ տարօրինակութիւններ»։

Եր. Տ. Անդրեասեան «Հայ Երիտասարդութիւնը և հայերէն լեզուն» յօդուածին մէջ, տարագրութիւնէն ճողոպրած հայ նոր սերունդի մասին լաւատես է, և կ'ուզէ տեսնել հրաշքը. «Արտասահմանեան գրականութիւնը այսօր կը մրցի բուն Հայաստանի գրականութեան հետ, ոչ թէ միայն լեզուով, այլ նաեւ նիւթով»։

Եւ այլուր ազատօրէն յայտնելով իր գաղափարը կ'ըսէ թէ. «Երեւանի հրապարակագրութիւնը շատ ետ կը մնայ արտասահմանեանէն, հակառակ իր բիւր դիւրութիւններուն։ Հոն լեզուն կը թմրի հետզհետէ, կը ծիւրի անոր ազգային աւիշը, և արտասահմանի ակնարկուած գրականութիւնն է որ օր մը փոխ պիտի տայ իր ուժը, կառուցանելու համար հայ լեզուով գրականութեան ելեկտրական ամբարտակը»։ Դատումներ յանդուգն՝ որոնց համար հարկաւոր են փաստեր և աւելի ծանօթութիւն Հայաստանի մէջ ծնող ու զարթգացող գրականութեան...։

Յ. Ճ. Սիրունի արուեստի տեսակէտով, Հայ հոգւոյն մէջ Արեւելքը ու Արեւմուտքը կը զննէ, փոխադարձ ազդեցութեանց վրայ անդրադառնալով։

Այս գրութեան մէջ Սիրունի կը յիշէ հեղինակները որոնք «խօսած են հայկական բնական արուեստին վրայ»։ Ըստ Տօքթ. Քաղ Ռօթի՝ ճարտարապետական հայ ոճի ամենապարզ արտայայտութիւնն է քառակուսիի վրայ գմբէթը։ Ասի իր ազդեցութիւնն ունեցաւ Հայաստանի սահմաններէն դուրս ալ։ Սիրունի կը յիշէ գրեթէ բոլոր արուեստագէտ մեծ վարպետները, որոնք գրած են հայկական ճարտարապետութեան մասին։ «Սթրչիքովսքիի կարծիքով հզօր կական ոճը. ծնած ու զարգացած Ե. Զ. դարերուն, բացարձակապէս ոչինչ առած ըլլալով բիւզանդական ոճէն, այլ ընդհակառակը անոր հայթայթած ճարտարապետական ձեւերէն մէկ քանին. — լայնատարած կոնքին և գմբէթին միախառնումը, օրինակի համար, և եռակոնքը, որոնք քրիստոնէական հին արուեստին ամենէն յատկանշական ձեւերն էին»։ Սիրունի այս շահեկան ուսումնասիրութիւնը ունի Բ. մասը առաջիկայ Տարեգրքին համար։

Ա. Խունկարեան կ'ուրուագրէ Հայաստանի մէջ գրական կեանքի ընդհանուր պատկերը. քննադատի ակնոցով կը դիտէ ու կը չափէ «սոցիալիզմի կառուցման» նպաստող գրչի հին ու նոր մշակներու գործը։

Գ. Գիւզալեան. — Ուսումնասիրելով «Հայ Մշակոյթի վարիչ»ի դերը, ըստ Ստեփ. Նազարեանի կը վերլուծէ նոյն ինքն Նազարեանի ընկերական, կրօնական և ազգայնական հոգեբանութիւնը։

digitised by A.R.A.R.@

Գ. Մխիթարեան. — Մոռցուած «Ինտրա»ն — Տիրան Զրաքեանը գրական բեմին վրայ կը հանէ, և կը յայտնէ անոր արժանիքը, դառնացած կ'ըսէ թէ «բազմութիւն մը գրողներու և գրչակներու՝ յարձակած է անոր գործին ու անձին վրայ, հեգնելով կամ հայհոյելով»։ Ըստ Մխիթարեանի՝ Վրթանէս Փափազեան «էջեր կրցած է շարադրել միջակութիւններու համար, ջրոտ գովասանքներով, ուրբ տող միայն բարեհաճած է յատկացնել Զրաքեանի, ծանօթագրութեանց բաժինի մէջ, «խորունկ այլ ձապաղ» նկարագրութեանց հեղինակ միայն համարելով զայն»։ Այս առիթ Մխիթարեան՝ Ինտրայի օրով յայտնի գրողներու մասին նպաստաւոր չի խօսիր, զի այդ ատեն «Պոլսոյ հայ գրականութիւնը աշնան տերեւներ կը ժողվէ»... վերածնունդի շրջանէն — կ'ըսէ — «փշուրներ են մնացած անտաղանդ գրողներու, գրական երգահաւաքներու ձեռքը։... Պարպուած էր Պոլիսը, ուր կը տիրեն լրագրողները, կամ շարաթաթերթերը, փոխանակ ճշմարիտ գրագէտին ու գրականութեան։ Անտոնեան, Զիֆթէ Սարաֆ, Ե. Արմէն, Տիգր. Արփիարեան, Ա. Փանոսեան, Մ. Աճէմեան, Անայիս և այլն. ժոգոյն դէմքեր, անբաւական կէս—գրագէտներ, գունատ ու ափիշէ զուրկ բանասնաստեղծներ...»։

Այդ անկեալ շրջանին մէջ կը կանգնի Զրաքեանի կուռքը. Ինտրա կոչումն ունեցող արուեստագէտ մըն է, ի ծնէ գրականութեան նախասահմանուած, «հին բառով մը՝ կոչեցեալներէն. ծնած արուեստագէտ. նախ՝ արուեստագէտ. — նկարիչ առաւելապէս, — և ապա գրագէտ, բայց միշտ արուեստագէտ, այսինքն՝ ակամայ կոչեցեալներէն»։

Ըստ Մխիթարեանի, Զրաքեան «կոչուած էր մեծ ըլլալու» սակայն «կեանքի պայմանները թոյլ չտուին՝ որ ան իր մեծութեան լրումին հասնէր»։ Ասով հանդերձ կ'ըսէ կենսագիրը, թէ Զրաքեանի «զմայլելի կարողութիւնը գինքը կը դասեն մեր մեծագոյն գրագէտներու շարքը»։

Մինաս Թէօլէօլեան. — «Յակոբ Օշականի»ի պատկերը շրջանակի մէջ կ'առնէ. «Նովէլէնիբար»ի օրէնքով պատկերը շրջանակին շատ յարմար է։

Յ. Իրազեկ. — Պատմական պրպտումներով լրագրական շրջանակին մէջ շատ ծանօթ «Շտեմարան» լրագրի անծանօթ մնացած կարեւոր կէտերը կը ծանօթացնէ։ Իրմէ առաջ այդ լրագրի մասին հեղինակաւոր գրողներուն եւս անծանօթ մնացած էին Իրազեկի յայտնութիւնները։

Ռուբէն Բերբերեան «Համազգեաց» ընկերութեան պատմութիւնը կ'արձանագրէ պատմիչի անկողմնակալութեամբ. փոշիներու մէջ անյայտ մնացած այդ պատմութիւնը, յարմար ատենին անգամ մը եւս հրապարակ հանելը իր մեծ օգուտը կ'ունենայ, եթէ այդ ընկերութեան անդամներու, նախկին մեծ գործիչներու յաջորդները՝ օրինակ առնելով, անոնց խանդավառ ոգւով աշակցին կրթական գործին բարոյական կամ նիւթական միջոցներով։ Այդ ընկերութիւնը կը հաստատուէր 1846 թուականին, որուն կանոնագիրը կը ստորագրէին 75 հիմնադիրներ, մեծ մասը Մուրատ—Ռափայէլեան վարժարանի աշակերտներն էին, Մերենց և բանաստեղծ Պէշիկթաշլեան՝ ամենէն եռանդուն գործիչները, անոնք «մտերմանում են և ընդհանուր լեզու գտնում կրթուած արդէն Պոլսում հաստատուած յառաջադէմ տարրերի հետ, և վճռում են Միաբանութիւն անելով, ամէն կրօնքի ու դասի հայերու հետ, համերաշխութեան ու եղբայրական սիրով՝ ազգին ծառայել»։ Հիմնադիրներուն մէջ «կային հայ կաթոլիկներ և լուսաւորչականներ, աշխարհականներ և կրօնաւորներ, մտաւորականներ և արհեստաւորներ, կրթուած ու «լուսաւորեալ» երկու ամիրաներ և գրել կարդալ չիմացող հայ գաւառացիներ։ Ասոնք միաբան միահոգի եղբայրութեան սէրը կը քարոզէին։ Կրթական գործն էր անոնց էական նպատակը՝ քաղաքներու ու գիւղերու մէջ վարժարաններ կանգնել. երկրագործութիւն և վաճառականութիւն ծաղկեցնել հայերու

մէջ. օգտակար գրքեր գրել ու թարգմանել և հրատարակել և այլն։ Դրէն գործի կ'անցնէր ընկերութիւնը, զի ձեռք անցուցած էր գումարներ, ազգը անխտրաբար կ'օգնէր անոր, որ երկու տարուան շրջանին մէջ մեծ ժողովրդականութիւն և բարոյական հեղինակութիւն վաստակած էր։

Նիկոլ Աղբալեան. — Կը խօսի Յ. Մանանդեանի «Ֆէոդալիզմը հին Հայաստանում» անունով «մի շատ արժէքաւոր գրքի» մասին. նկատի կ'առնէ գրքին այն խնդիրները որ կը վերաբերին հին Հայաստանի ընկերային կազմին և դասակարգերու փոխադարձ յարաբերութեանց։

Բժ. Վահրամ Թորգոմեան. — Կը գրէ «Գէորգ Բժիշկ Հախվէրտեանի[1]» վրայ. կենսագրական գծերէն զատ, անձնական յուշերն ալ արձանագրած է. «Մելքիսեդեկ Սրբազան Մուրատեանց ինձ պատմած է — կ'ըսէ — թէ Գէորգ բժիշկ Հախվէրտեանց առաջինը եղած է որ Թիֆլիզի բարբառը գրականացուցած է. թէ նա եղած է հայոց եկեղեցական ծէսերու և սովորութիւններուն ռուսահայոց պահպանել տուողը։ Եղիշէի ռուսերէն թարգմանութեան գլխաւոր աշխատասիրողն, Հայոց բոլոր պատմագիրներն ուսումնասիրողը»։

Ա. Աբեղեան. — Կը գրէ «Սկանդինաւեան Հայագէտներ»ի վրայ։ Երկարօրէն կը խօսի հայագէտ Սոֆուս Բուգէի մասին, կը խօսի հայագէտ Սոֆուս Բուգէի մասին, զոր եղած է Գոթերէնի վրայ։ Լեզուագէտ գիտնականը կ'ըսէ թէ «Ես կասկած չունիմ որ երրորդ և չորրորդ դարերում (Քր. յ.) Կապադովկիոյ խօսակցական լեզուն յունարէն չէր միայն։ Ինչպէս մեր օրերում, այնպէս, և հնումը՝ նոյն այդ տեղերը բնակում էին հայեր եւս։ Կապադովկիոյ յունական արդի բոլոր բարբառներում, պահպանուած կան հայերէն լեզուի տարրեր։ Մէկ մասով զրանք ծագում են հայերէն հնագոյն ձեւերից։... Անկասկած՝ երրորդ և չորրորդ դարերում (Քր. յ.) Կապադովկիոյ մէջ, ուրեմն և Պառնասոսի շրջակայքում, յունարէնի հետ միասին՝ խօսում էին և հայերէն»։ Ըստ Բուգէի այդ խօսուած հայերէնը գրոց լեզու չէր, այլ ռամկական բարբառ որ ազդած է գոթերէնի վրայ. և այդ հայերէնէն փոխ առնուած են այն բառերը որ գործածուած են գոթերէն Ս. Գրքի մէջ։

Կ. Յ. Բասմաճեան. — Բառաքննական մէկ տեսութեան մէջ «Բորոտութիւն» բառի ստուգաբանութիւնը կը կատարէ, լեզուական զանազան փաստերով։

Ս. Սրենց մանրամասնօրէն կը գրէ «Անգութն իշխան Եուան»ի գիւանագիտական և ռազմագիտական պատմութիւնը. Մոլտաւիոյ այդ մեծ իշխանին մայրը հայ էր։

Գէորգ Մրսրլեան. — Խօսելով Տր. Հասան Իպրահիմի «Էլ Ֆանթըմիյունէ ֆի Մըսր» գրքի վրայ, կը թարգմանէ այդ երկէն էջեր որոնք աղերս ունին «Պէհրամ (Վահրամ) Էլ Էրմէնի» հայազգի վէզիրին գիւանագիտական պատմութեան հետ։

Բ. Թաշեան կը քննադատէ «Մեր պատմիչները իբրեւ քննադատ». կը ցաւի որ մեր պատմիչներու երկերուն մէջ, ինչպէս կ'ըսէր Ն. Մառ՝ «կրիտիկական աշխատութիւններու պակասը» կայ։ Թաշեան ինքը աններողամիտ կը գտնուի մեր պատմիչները. կը գրէ թէ մեր նախնի պատմաներուն. կը գրէ թէ մեր նախնի պատմաբան եկեղեցականներուն համար «Ամէն ինչ կ'ամփոփուէր եկեղեցիի, գմբէթի ու վեղարի սեղմ շրջագծին մէջ», ինչ որ ճիշտ չէ։ Հ. Ալիշան մեր հին պատմիչներու մատենագրութեան մէջ կը տեսնէ «կատարեալ և գերագոյն հայկաբանութիւն» Թաբրեալ և գերագոյն հայկաբանութիւն» Թաշեան կը մերժէ «արժէքի այդ չափանիշը պայմանը քննադատական մերձեցումն է ժամանակին, դէպքերուն և անձերուն։ Այդ

---

1. Հախվէրտեանի մասին ընդարձակօրէն գրած եմ 1903ին (Բազմ. 8. Օգոստ.) և «Ազգային Դէմքեր» Բ. հտ. էջ 37–84) գրքիս մէջ։ — Բանասէր բժիշկը «Սայեաթ Նովայի» երգերու հաւաքածոյէն զատ, ունի նաեւ ուրիշ աշխատասիրութիւններ «Կռունկ»ի մէջ, ջուղայեցւոց բարբառով «Ժամանակագրութիւն Պետրոս Դ.ի, Սարգիս Գիլանենցի», «Յովսէփ Կաթողիկոսի Յիշատակարանը, 1778–1793» նոյնպէս «Կռունկ»ի մէջ։

digitised by A.R.A.R.@

մերձեցումն է որ կը պակսի մեր պատմիչներուն»։

Շ. Նարդունի. — Ունի ախտաբանական տեսութիւն մը «Պայքար ընդմէջ հանճարին և խենթութեան» վերնագրով։ Գրութիւնը ամբողջովին նուիրած է Շումանի եղերական կեանքին։ Նարդունին կ'ըսէ որ այն դաշնակահար մեծ վարպետը կատաղօրէն կը կարդար Շիլլէր, Պայրընը, Կէօթէ, Որատիոս (որուն չէր հաւներ), Կիկերոն (զոր շարլաթան) կ'անուանէր։

Փայլակ Սանասար. — Մորիս Մէթէրլինքի ամբողջական տպաւորութեան տակ՝ կը գրէ «Տիեզերքի ճակատագիրը» վերնագրով տեսութիւններ, ուր կ'աշխատի վերլուծել կեանքի յեղաշրջումներու անլուծանելի տիեզերական պատմութիւնը։ Անտարակոյս ինքն ալ համոզուած է որ իր պատճառաբանութիւններն անվերծանելի մնացած են ու կը մնան։

Բժ. Եր. Արզումանեան. — Կը գրէ «Ցաւութեան ճանաչումի» մասին, և կը քննէ սեռը ճանչնալու հարցը։

Հրանտ Աշեանաք. — Ցոյց կու տայ թէ ինչ է «Նկարչութիւնը և իր արդի ձգտումները». — Կը պայքարի Մառինէթիի ապագայապաշտ խելացնոր «մանիֆէսթ»ին դէմ, և արուեստագէտի ըմբռնումով ընթերցողը գեղեցկագէտ վարպետներու մտորումներուն հաղորդակից կ'ընէ։

Գեղամ Երամեան. — Կը գրէ «Ճշմարտութեան տագնապի և բարոյական նոր ըմբռնումներու» վրայ։ Ճշմարտութեան տագնապը միշտ եղած է, և բարոյական ըմբռնումները նոր չեն, նոր ըմբռնումները հիներուն հակադրութիւններն են, սակայն այդ հակադրութիւններն ալ նորութիւններ չեն, այլ նորոգուած ըստ ժամանակի ըմբռնողութեան։

Հայկ Ստեփանեան. — Կը խօսի «Հայ գեղջուկ երաժշտութեան մասին»։ Անտարակոյս գեղջուկ երգը կը փնտռուի ընդհանրապէս ժողովրդական երգերու մէջ, քան թէ եկեղեցական երաժշտութեան մէջ։ Ստեփանեան կը համարի թէ, առաջինը «համակ յոյզ, ներքին չմտածուած մղումներ են», իսկ երկրորդը «վսեմի որոնումին ընթացքին երաժշտական արտայայտութիւններ»։ Ասկէ զատ՝ կը գրէ թէ. «Մեր երաժշտութիւնը արեւելեանէն տարբերող գիծերէն մէկն ալ իր աշխուժութիւնն է. ամենէն տխուր երգերուն մէջ իսկ ան զերծ է արեւելեան եղանակներու քաշքշուքներէն ու մեղկանքէն»։

Տարեգրքի վերջին մասին մէջ հայ կեանքէն համեստ բաժին մը կայ. մանրամասն խօսուած է «Համազգային ընկերութեան» հայ կրթական և հրատարակչականի վրայ։ Վերջինս Գահիրէի մէջ հիմնուած է 1928 Մայիս 28ին, որուն նպատակն եղած է հայ ժողովուրդի կրթական մակարդակը բարձրացնել հայ լեզուով և հայ հոգւով։

Այս է «Համազգային Տարեգիրք»ի ամբողջական պատկերը մանրամասնօրէն. իւրաքանչիւր գրողի արտադրութիւնը մատնանիշ ըրի հոս. գեղեցիկ թէ տգեղ, արժէքաւոր կամ անարժէք՝ այս մասը թող դիտողն ու քննողը կշռէ ու դատէ։

Հին յոյները և լատիններն քննադատութեան պաշտօնը Հերմէսին յանձնած էին, ան՝ Ոլիմպոսի դրան դիմացը կանգնած, արժանաւորները միայն կը թողուր որ դռնէն ներս մտնէին։ Անարժանները կը մերժէր, անսասներու գլխուն կ'իջեցնէր կրկնակ օձով գալարուն գաւազանը։ Հայ դիցաբանութեան մէջ Հերմէս մը չենք ունեցած. որով մեր գրողները ազատօրէն կը մտնեն Ոլիմպոսի դռնէն ներս, առանց մեզի հարցնելու թէ արժանիք ունի՞ն թէ ոչ։ Ինչ որ պատասխանատուութիւն է, այն կը ծանրանայ այդ գրողները համախմբող խմբագրութեան վրայ։ Միայն կը ցաւիմ ըսելու որ այդ Տարեգրքի խմբագրողները Մարինէթիի նժարով կը չափեն Ալիշանի, Աբովեանի նման ընդհանուր հայութենէն պաշտուած անունները. Զէսթրֆիլտ կ'ըսէր թէ. Լաւագոյն հեղինակներն անոնք են որ խիստ կերպով կը քննեն իրենց հեղինակութիւնները...

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

«ՀԱՅՈՒՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ»

ԳՐԵՑ Հ. ՎԱՐԴԱՆ Վ. ՀԱՅՈՒՆԻ

Հայ լրագրութիւնը կանխեց ծանուցանել այս աշխատութիւնը՝ բարեսէր մեկենասին անուան հետ, զգալով ու զգացնելով անոր կարեւորութիւնը։ Մինչ դեռ գործն ընդ մամլով կը գտնուի, օգտակար կը դատինք անոր մասին աւելի մանր տեղեկութիւն մը տալ մեր ընթերցողներուն, այս առթիւ մեր շնորհակալութիւնն հրապարակաւ ալ յայտնելով Տ. Տիգրան Մինասեանի։

Մարդկային մեծ ընկերութեան փոքրիկ պատկերն է ընտանիքը, որ կազմուած ու հաստատուած է միութեան ու գործակցութեան մէջ առն ու կնոջ՝ որ արարչութեան մէջն օգնական նշանակուեցաւ այր մարթենէն։ Սակայն անոր տրուած դիրքը մեզուն։ Սակայն անոր տրուած դիրքը մեծապէս փոփոխական եղեր է ազգերու մէջ՝ անոնց քաղաքակրթութեան չափին համեմատ. ոմանց քով բոլորովին անարգ և անշնչար թողուած, և ուրիշներու՝ շատ բարձր բռնուած. ոչ ընտանեկան յարկին միայն՝ այլ և ընկերութեան մէջ, ուր հաւասարապէս հասեր է անոր գործունէութիւնը, մանաւանդ քրիստոնէական լուսաւորութեան մէջ։

Կը պարծինք մենք Հայերս մեր անցեալ քաղաքակրթութեամբ։ Բայց տակաւին բաւական ծանօթութիւն չունինք հին հայ կնոջ կրկնակ դերին. ուստի և ոչ մեր հին քաղաքակրթութեան ամբողջ չափին։ Այլակրօն ազգերու ճնշող ու դարաւոր լուծն յեղաշրջեց անոր նկարագիրը. այնպէս որ ոչ արդի գաւառաբնակ կնոջ անշուք կենցաղին և ոչ եւրոպականացած հայ տիկնոջ բարքին մէջ կարող ենք որոնել հին հայ կնոջ նկարագիրը։ Այլ հարկ է վերցնել պատմութեան քողը, և հոն փնտռել ճըշմարիտ հայուհին, զայն իսկապէս ճանչնալու համար։ Շատեր խուզարկեցին զայն ու գտած իսկ կարծեցին, բայց չգտան։ Եղիշէի «Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին՝» հանրածանօթ յեղյեղուած ու գրեթէ միակ աղբիւրը կը կազմեն այդ ծանօթութեան։ Բայց ո՞րքան աղքատ բովանդակութեամբ, և ո՞րչափ թերի հասկցուած նոյն իսկ այդ համառօտ էջն ալ։

Եւ սակայն հայ կնոջ պատմութիւնն այնքան ընդարձակ և այնչափ շքեղ է՝ որքան մարդուն, ցրուած և անտես մնացած մեր անցեալ տպագիր կամ անտիպ մատենագրութեան մոռցուած խորշերուն մէջ։ Հ. Հայունի՝ որ իրեն զբաղանք ընրած է հայ անցեալին լուսաբանութիւնը, համոզուած՝ որ մոռացութեան այդ քողը վերցնող պիտի չգտնուէր՝ գործին դժուարութեան պատճառաւ, պէտք ու պարտք համարեցաւ իրեն՝ ժողվել ու կազմել հայուհւոյն իսկական պատմութիւնը։ Մեծայուհւոյն իսկական պատմութիւնը։ Մեծաղիր ու ստուար հատոր մը կը գրաւէ ան, զարդարուած պատմական նկարներով ալ։ Եւ 18 գլուխներու մէջ իրրեւ շարժանկարի մը մէջ՝ երեւան կու գայ հին հայ կնոջ կեանքը իր ամբողջ չքնաղ ու պերճ երեւոյթներով, անուններով ու մեծ կամ փոքր դրուագներով։

Գլ. Ա. — Կը տեսնես նախ իր մանկութիւնն ենթարկուած խնամոտ սենեկան ու դաստիարակութեան մը, օժանդակութեամբ նախ դայեկի և ապա յատուկ դասթեամբ նախ դայեկի և ապա յատուկ դասատիարակի մը, երբ ազնուական է, մինչ ռամիկ աղջկան կրթութիւնը կախուած է անոր ընտանեկան վիճակին կամ ընկերութեան հայթայթած դիւրութեանց աստիճանէն։

digitised by A.R.A.R.@